

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N « ՀՀ ՏՄ-ՇՀՇՁԲ-16/1-1 »**

ք. Իջևան

«30» դեկտեմբերի 2015 թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Յիրիկյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատուց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները:

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 2100000 (Երկու միլիոն մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում(որը կսահմանվի տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվելիք համաձայնագրով՝ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում)՝ (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2016թ. դեկտեմբերի 25-ը:

4.3 Սույն պայմանագրի վճարման կարգը (N2 հավելվածը) կսահմանվի տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող կնքվելիք համաձայնագրով՝ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՎԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետը՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսելը, սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Նույն կետի համաձայն՝ կնքված պայմանագիրը լուծարվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվել:

7.2 Սույն պայմանագիրը համարվում է կնքված Կողմերի ստորագրման պահից և ուժի մեջ է մտնում գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող վճարման կարգը (N2 հավելվածը) սահմանող համաձայնագրի

¹ Պայմանագիրն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված լինելու դեպքում տուգանքը հաշվարկվում է պայմանագրի գնի այն մասի նկատմամբ, որի համար տրված արժեքը ընթացքում կհարկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.6 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.8 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.9 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.10 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ


ՀՀ Տավուշի մարզպետարան

ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան

Սահմանադրության 1

Հ/Հ 900371051039

ՀՎՀՀ 02611324



ՎԱՃԱՌՈՂ


<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ

ՀՀ ք. Երևան

Արգիշտի 4/1

Հ/Հ 2470113333300000

ՀՎՀՀ 01551651



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*


Օպտիկամանրաթելային կապուղով ինտերնետ հասանելիության ծառայության տրամադրում, առանց տրաֆիկի ֆիլտրման կամ սահմանափակման, շուրջօրյա 24/7 անխափան տեխնիկական ապաստարկում, 16 իրական IP հասցեների տրամադրում, համակարգիչների ապաստարկում: Կապի արագությունը մատակարարի և պատվիրատուի միջև ոչ պակաս 1000 ՄԲթ/վ - ից:

**ՀՀ Տավուշի մարզպետարան ք.Իջևան, Սահմանադրության 1 , 60 համակարգիչ, ք.Իջևան Մետաղագործների 37 , 2 համակարգիչ
ք.Նոյեմբերյան, Զորավար Անդրանիկի 3, 2 համակարգիչ, ք.Դիլիջան Միանիկյան 66 - , 2 համակարգիչ, Բերդ, Լևոն Բենի 10 - , 2 համակարգիչ**


Տեխնիկական բնութագրերի տարրերը	Նկարագրությունը		
Ինտերնետային կապի տեսակը	Առանձնացված Օպտիկամանրաթելային կապ /վերը նշված բոլոր հասցեներում/ Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային վաթթեթների կարգաբերում		
Ինտերնետային կապի միացման նախապայմանները: Համացանցային ծառայություն	Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում (մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին) Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային մալուխի անցկացում մինչև օգտվողի կադմից նշված կետը (մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին)		
Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև	Օպտիկամանրաթելային միջոցով՝ 1000 մբթ/վրկ առնվազն		
Ինտերնետային կապի ապաստարկման նախապայմանները	Օպտիկամանրաթելային մալուխով	ըստ կապի պատվիրված արագության	երաշխավորված երկրորդմանի արագություն (ՀՀ և ՀՀ տարածքից դուրս այցելած կայքերի համար)
	ըստ կապի օգտագործված տրաֆիկի (քանակի)		
Այլ պահանջներ	Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն ապահովելով համարժեք արագագործությունը		
	Անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում		
	Մերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն անհրաժեշտության դեպքում		
	Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում		
	Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի on-line վերահսկման հնարավորություն		
	Ծառայության հետ կապված ծրագրային ապահովում		
	Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով)		
	Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում՝ վաճառքի կամ վարձակալության հիմունքով		
	Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում՝ ըստ պահանջի		
	Անհրաժեշտության դեպքում օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերձանման տրամադրում:		
	Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի համակարգչային մասնագետին		
Ինտերնետային կապի հետ կապված՝ լրացուցիչ ծառայություններ	Էլեկտրոնային փոստի տրամադրում (պահանջվող քանակով փոստարկղերի տրամադրում)		
	<<.am>> տիրույթում ենթատիրույթի գրանցում և պահպանում		
	Էլեկտրոնային էջի կամ շրա հայելու տեղակայում (հոսթինգ)		
	Ցանցային անվտանգության սարքի վարձակալության գինը 1 ամսվա համար (Firewall)		
	Ինման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:		
Սկիզբը՝ Պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո՝ լրացուցիչ համաձայնագրի կնքման օրը	Պայմանագրի կատարման վերջնաժամկետ՝ 25.12.2016թ.		

*Սույն պայմանագրի գնման կարգը կահմանվի տվյալ պայմանագրի անբաժանելի մասը կազմող լրացուցիչ համաձայնագրով՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում:

ԳՆՈՐԴ
ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ Տավուշի մարզի Իջևան
Սահմանադրության 1
ՀՀ 037
/ստորագրություն/



ՎԱՃԱՌՈՂ
<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ
ՀՀ ք. Երևան
Արգիշտի 4/1
ՀՀ 2470113333300000
01551651
/ստորագրություն/ Վ.Տ



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ «Պետության կարիքների համար ինտերնետային կապի տրամադրման ծառայությունների մատուցման» պետական գնման պայմանագրի Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 201 թ.

Պայմանագրի համարը՝ « »
 Պատվիրատուն՝ ի դեմս _____ և

Կատարողը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N _____ եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

N « ՀՀ SU-ՇՀՇՁԲ-16/1-1» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և

(Պատվիրատուի անունը)

_____ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____

(Կատարողի անունը)

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ – -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ազգանուն, անուն

ստորագրություն

ստորագրություն

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀՀ ՏՄ-ՇՆԾԲ-16/1-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Իջևան

«15» հունվարի 2016թ.

ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս. Դավթյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ղ-Տելեկոմ» ՓԲԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ. Յիրիկյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2015 թվականի դեկտեմբերի 30-ին կնքված N ՀՀ ՏՄ-ՇՆԾԲ-16/1-1 գնման պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր)՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով Պայմանագրի 4.3 և 7.2 կետերը՝ Պայմանագրի վճարման կարգը սահմանել սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով և N 2 Հավելվածով՝ Վճարման ժամանակացույցով: Սույն պայմանագրի պայմանները տարածվում են կողմերի միջև 2016 թվականի հունվարի 8-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում մինչև 2016 թվականի դեկտեմբերի 25-ը՝ հանդիսանալով Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմվում է 3 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները


ԳՆՈՐԴ

ՀՀ Տավուշի մարզպետարան
ՀՀ Տավուշի մարզ ք. Իջևան
Մահմանադրության 1
Հ/Հ 900371051039
ՀՎՀՀ 07611324



ՎԱՃԱՌՈՂ

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ
ՀՀ ք. Երևան
Արգիշտի 4/1
Հ/Հ 2470113333300000
ՀՎՀՀ 01551651



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Օպտիկամանրաթելային կապուղով ինտերնետ հասանելիության ծառայության տրամադրում, առանց տրաֆիկի ֆիլտրման կամ սահմանափակման, շուրջօրյա 24/7 անխափան տեխնիկական սպասարկում, 16 իրական IP հասցեների տրամադրում, համակարգիչների սպասարկում: Կապի արագությունը մատակարարի և պատվիրատուի միջև ոչ պակաս 1000 ՄԲթ/վ – ից:
 ՀՀ Տավուշի մարզպետարան ք.Բջևան, Մահմանաղլույան 1 , 60 համակարգիչ, ք.Բջևան Մետաղագործների 37 , 2 համակարգիչ
 ք.Նոյեմբերյան, Ջորափար Անդրանիկի 3, 2 համակարգիչ, ք.Դիլիջան Միասնիկյան 66 - , 2 համակարգիչ, ք. Բերդ, Լևոն Բեկի 10 - , 2 համակարգիչ

Տեխնիկական բնութագրերի տարրերը	Նկարագրությունը		
Ինտերնետային կապի տեսակը	Առանձնացված Օպտիկամանրաթելային կապ /վերը նշված բոլոր հասցեներում/ Կապի միացման համար անհրաժեշտ ծրագրային փաթեթների կարգաբերում		
Ինտերնետային կապի միացման նախապայմանները: Համացանցային ծառայություն	Անհրաժեշտ կոմունիկացիաների և սարքերի տեղադրում (մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին) Անհրաժեշտության դեպքում՝ օպտիկամանրաթելային մալուխի անցկացում մինչև օգտվողի կաղվից նշված կետը (մարզերի չափաբաժիններով Կատարողի հաշվին)		
Ինտերնետային կապի երաշխավորված արագությունը օպերատորի ցանցային հանգույցի և օգտվողի միջև	Օպտիկամանրաթելային միջոցով՝ 1000 մբթ/վրկ առնվազն		
Ինտերնետային կապի սպասարկման նախապայմանները	Օպտիկամանրաթելային մալուխով	ըստ կապի պատվիրված արագության	երաշխավորված երկկողմանի արագություն (ՀՀ և ՀՀ տարածքից դուրս այցելած կայքերի համար)
Այլ պահանջներ	ըստ կապի օգտագործված տրաֆիկի (քանակի)		
	Անհրաժեշտության դեպքում՝ պահուստային միացման առկայություն ապահովելով համարժեք արագագործությունը		
	Անհրաժեշտության դեպքում՝ հավելյալ մուտքային կապի արագության տրամադրում		
	Սերտիֆիկացված մասնագետների կողմից օգտվողի ցանցի անվտանգության վերլուծություն անհրաժեշտության դեպքում		
	Օգտագործած ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում		
	Կապի առկայության, որակի և մատուցած ծառայության ծավալի on-line վերահսկման հնարավորություն		
	Ծառայության հետ կապված ծրագրային ապահովում		
	Պահանջվող քանակով ծառայությունը մատուցողի կողմից գրանցված իրական Այ Փի հասցեների տրամադրում (պարտադիր օգտագործման պայմանով)		
	Անհրաժեշտության դեպքում՝ անհրաժեշտ սարքավորումների տրամադրում՝ վաճառքի կամ վարձակալության հիմունքով		
	Համակարգչային վիրուսների մասին տեղեկացնող համակարգի ակտիվացում՝ ըստ պահանջի		
	Անհրաժեշտության դեպքում օգտվողի կողմից ՀՀ տարածքից դուրս այցելած հանգույցների վերձանման տրամադրում:		
	Ինտերնետային տրաֆիկի մեծ արտահոսքի դեպքում անհապաղ տեղեկացում պատվիրատուի համակարգչային մասնագետին		
Ինտերնետային կապի հետ կապված՝ լրացուցիչ ծառայություններ	Էլեկտրոնային փոստի տրամադրում (պահանջվող քանակով փոստարկղերի տրամադրում)		
	<<.am>> տիրույթում ենթատիրույթի գրանցում և պահպանում		
	Էլեկտրոնային էջի կամ դրա հայելու տեղակայում (հոսթինգ)		
	Ցանցային անվտանգության սարքի վարձակալության գինը 1 ամսվա համար (Firewall)		
	Գնման ընթացակարգը կազմակերպվում է <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի հիման վրա:		
Սկիզբը՝ 08. 01. 2016թ.	Պայմանագրի կատարման վերջնաժամկետ՝ 25.12.2016թ.		


ԳՆՈՐ

ՀՀ Տավուշի մարզպետարան
 ՀՀ Տավուշի մարզ ք. Բջևան
 Մահմանաղլույան 1



ՎԱՃԱՏՈՂ

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ
 ՀՀ ք. Երևան
 Արգիշտի 4/1
 1/2 24701.1333330000
 ՀՀ ՀՀ 01551651




ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ *

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Ինտերնետային կապի տրամադրման ծառայություններ	140 000	280 000	420 000	595 000	770 000	945 000	1 120 000	1 295 000	1 470 000	1 680 000	1 890 000	2 100 000	2 100 000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ Տավուշի մարզպետարան
 ՀՀ Տավուշի մարզ ք. Բջևան
 Մահմանադրության 1
 Հ/Հ 900371051039
 ՀՎՀՀ 07611324

Մարտին Կոչյան
 Ստորագրություն


ՎԱՃԱՌՈՂ

<<Ղ-Տելեկոմ>> ՓԲԸ
 ՀՀ ք. Երևան
 Արգիշտի 4/1
 Հ/Հ 2470113333300000
 ՀՀ 01551651

Ռ. Յիրիկյան
 Ստորագրություն
